

Թիւնը, որը արդէն դարերի և ժամանակների մէջ եղած փոքրիկ հաւաստի արծարծեն: Ամենայն մի մանուկ մօրից է ծնուած: Եթէ դաստիարակած է բարոյապէս նորա մայրը, եթէ կճանաչէ իւր կեանքի և ծնողական սուրբ պարտականութիւնը, ապա և բնութեան նորա խնամոց յանձնած քընքըջ ծաղիկը անտարակոյս պիտի զարգանայ բարոյապէս, և մշտաւորապէս չչեղուի իւր բարձր վախճանից, և երջանկութեան պսակը ընդունէ իւր զխոյ վերայ:

Փառք ժամանակիս, որ մեր ազգն ևս ծանաչել է արդէն մատաղ Հայ օրիորդների դաստիարակութեան նշանակութիւնը քաղաքական կեանքի համար, նոցա դաստիարակութեան անթիւ օգուտն երևի ազդութեան համար: ամենայն տեղ ճիշդն է գործ կրթութիւնը նոցա կրթութեան համար ուսմանց տաճարների հիմնելու և նոցա ուսումնական և բարոյական ընթացքին յառաջագիւծութեան պայմաններ գտնելու, ուրեմն երջանիկ յոյս և մեծամեծ բարութիւններ խոստացող ապագայ: Պատիարակութիւնը որքան երջանկութիւն է մի ազգի համար, նորա ամենայն մի ճառագայլը կենդանի կեանք գործելու ազդեութիւն ունի, նորա անշա մանրալ յոյսը միայն կխոստանայ ազնիւ և հանրօգուտ բնութիւններն զարգացնել մարդոյ մէջ, հասուցանել նորան այն տեղ՝ ուր որ կպահանջէ իւր բարձր կոչումը, ուր և դիմելու մի սրբազան պարտք կայ կնքուած իւրաքանչիւր մարդոյ վերայ: Մարդն բաղկացած է հոգուց և մարմնուց, որոնց ներգաշակ զարգացմանէն կախուած է ամենայն մի մարդոյ բարձր նշանակութիւնը: Թէ հոգուց և թէ մարմնոյ բարեպէս զարգացումը ամփոփուած է դաստիարակութեան նշանաւոր պայմանների մէջ: դաստիարակութեամբ պիտի նոքա յառաջն իւրեանց էութեան մէջ, դաստիարակութեամբ պիտի ծաղկին նոքա և զարգանան, ինչպէս որ կպահանջէ իւրեանց խորհրդաւոր կազմութիւնը, և հետեւեալ մարդը դաստիարակութեամբ միայն պիտի ստեղծագործի մարդ: Արքան բարձր է դաստիարակութեան նշանակութիւնը, որքան սուրբ և պաշտելի են նորա գործած բարութիւններն մարդկութեան մէջ: Նորա փառաւոր տաճարի նուիրական սեղանոյն առջև թող ի ծունկ խոնար-

հի ամենայն մի մարդ, ուղեցոյց մի հրեշտակ ճանաչելով զայն դէպ ի բարի և հետեւ մարդկութիւն և հետեւաբար դէպ ի յԱստուած:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵՂԵԱՆՅԱՆ:

ԿԱՐՕՏ.

Ո՛հ, երբ Հայաստան, խղճուկ Հայաստան,
Կորցրուց ամեն ինչ, ամեն փառք և խնդ,
Լացին իւր վանքեր, դաշտեր պատուական,
Արծազանք թողլով Հայ հոգուցն ի թինդ.
Լացին իւր որդիք
Ձիւրեանց Հայրենիք:

Բաղտազուրկ Մասիս ամպերու մէջէն
Հառաչեց, ողբաց զիւր աշխարհ անբաղտ,
Ո՛հ նորա յետին, հարուածքի օրէն,
Իւր ճերմակ զխոյն քօղ մի տարաբաղտ
Ծածկեց սգաւոր,
Ելաց իւր վատ օր:

Սուրբ Հայրենիքի գրկէն սիրասուն,
Նժդեհ՝ եւ պանդուխտ ցրուեցան Հայեր.
Կարօտ միմեանցից տարփանօք սիրոյն
Անցուցին տխուր կեանքերուն օրեր,
Ո՛հ, խեղճ Հայրենիք
Ո՛հ, Հայու որդիք:

Շաւարշան, Տղմուտ ու անմահ Վարդան
Հայոց սրտերուն թողին սուրբ պատկեր,
Սիրել սուրբ կրօն, սիրել Հայաստան,
Շնչել յախտեան հոգւով Հայասէր.
Անդ թափուեց արիւն
Հայոց քաշերուն:

Երկնքի երկրի Արարիչն արգար
Թող լինի պաշտպան ցրուած Հայերուս,
Թող Հայի անուն շնչէ դարէ դար,
Մթին ստուերից դառնալ դէպ ի լոյս.
Մեր բաղտին լապտեր
Վառէ միայն Տէր:

Թող մեր հեռաւոր սրտեր ու հողիք
Ազդուեան սիրով յօդին միմեանց հետ,
Տանել մեր ուղին ի լոյս զեղեցիկ,
Ուր միայն ծածկի երջանկութեան կէտ,
Ի լոյս կրթութեան,
Ուր փառք Հայութեան:

Թող աճին բարի եւ ուսումնական

Հայկայ որդիներ շատնան օրէ ց'օր.

Կ'իննդայ յայնժամ եւ խեղճ Հայաստան,

Եւ Հայու կեանքին վնի նոր բարօր:

Տաղէ ճն երկին

Սէր մեզ կամողին:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄՈՒՇԵՂԵԱՆ:

ՅՈՐԴՈՐ ՔԱՋԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԷԻ
Ի ՄԵՐ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ.

Մեր Նախահօր *) զուք հարազատ զաւակներ,
Քաջակորով անպարտելի հուժկուններ,
Արդէն ժամ է մեր թշնամեաց ընդ յառաջ
Դիմել մի սիրտ և մի հոգի անվնհեր:
Հաստատուն յոյս, և սուրբ հաւատ, նա և սէր,
Եւ ջերմ աղօթք վերուզդեցէք զուք առ Տէր.
Ի սուրբ սրտէ, որպէս ընծայ — պատարագ,
Թող ծառանան զէպ ի յերկինս ի նուէր:
Հապա, իմ քաջք և հարազատք, միաբան
Մի՛ յապաղէք տալ ջարդ գնդին պարսկական.
Արիասիրտ և վեհ հոգով կանգնեցէք
Ընդդէմ անկրօն սե խուժանին Սասանեան:
Առէք նիզակ, փայլուն սուսեր և վահան,
Միմեանց օգնել, զոն, փութացէք անրաժան.
Հազէք զըրաշ, և սաղաւարտ զիք ի զուխ,
Ընդ թշնամեաց պատերազմէք անսասան:
Դե՛հ, քաջացիր վեհ զու Արտակ Պալունի,
Ահա ընկեր և քեզ Տաճատ Գընթունի,
Եթէ բաւ չէ, իմ մարտակից քաջ ընկեր,
Ա՛ռ զու ընդ քեզ քաջ Ներսէհ Քաջերունի:
Օ՛ն, քաջացէք Համազասպ Համապասպեան,
Անվախ մանուկ քաջ Գարեգին Սրուանձտեան.
Ազգի բաղդը ձեր ձեռքին է այժմ, զոն,
Խորէն, Արսէն և Հրմայեակ Դիմաքսեան:
Յառա՛ջ խաղա, հզօր առիւծ Արշաւիր,
Թող նետերդ չանցնեն ի զուր ի նանիր.
Անպարտելի և զոռ մանուկ զու Վահան,
Կոտորած տուր մեր թշնամեաց անխոր:
Տեսէք, ահա ձեր յառաջն Աւարայր կայ,
Եւ Տղմուտ գետն խոխոջալով խրախոյս տայ —

(*) Հայկայ.

Զը լիւնաւ սուրբ հասարկէ՛ց՝ և մեռնէ
Վա՛ն աղբակն և աշխարհին անխնայ:
Գիտեմ այսօր պատրաստ են մեզ պատկներ,
Եւ պիտ' առնենք երկնքումը մեր վարձեր.
Տեսէք ահա — կապոյտ երկինք պատառուած,
Մեզ է կանչում պսակ ձեռին մեր ընկեր:
Աջն Աստուծոյ օգնական Ձեզ թող լինի,
Որ կոտորէք անվախ զօրքըն Վասակի.
Լաւ է մի օր մեզ քաջութեամբ մեռանել,
Քան թէ կրրել մեր վիրայ անուն չարի:
Ուրեմն ով քաջք, ահա Վարդան և ձեր հետ
Կաշխատի, որ թշնամիքն առնէ անհետ —
Ձար Վասակին և իւր զօրքը միաբան,
Դարձուցանել զէպ ի փախուստ — յետ ընդ յետ:
ԱՂԷՔԱՆԴԵՐ ՄԻԹԱՐԵԱՆՑ.

ՅԱՂԷՔԱՆԴԵՐ.

ՊԱՆԴՈՒԽՏ ՀԱՅ.

Պանդուխտ եմ ես, օտար եմ ես յայս երկիր,
Սիրտս տըխուր, միտքս մոլոր ինձանից
Դեռ պատանեակ, դեռ նոր ծաղկած ի հասակ,
Բաղդը զրկեց զիս մայրենի սուրբ զրկից:
Դեռ նոր ծաղկած վարդի նման նորարաց
Գոգցես մաշին կենացս օրեր անխնամ,
Հեռի եմ ես Հայրենիքէս սիրասուն.
Ուր երջանիկ կեանք վարէի յարաժամ:
Այն ինչ թռչունք ծառոցն ի թուփ ճուղղեն,
Աչացս հանդէպ տանին, բերեն բիւր ցաւեր,
Դռնեմ սրտէս, զուք ով թռչունք գեղերեւ
Ունի՛ք արդեօք Հայրենիքէս խապրիկներ:
Մինչ խոխոջան մարգարտի պէս առուակներ
Ծաղկանց մեջէն սահին գնան սրընթաց,
Ո՛ւր զուք, ասեմ, պարզ առուակներ, գիմէք ո՛ւր:
Զիմ՝ արտասուս տանի՛ք յերկիր Հայրենեաց,
Մինչ եթերին վառին աստեղք և Լուսնակ,
Աստեղք գուհի և զու Լուսին գեղերես,
Ի՞նչ կողաք երկնքի մէջ լուռ ու մունջ,
Մի՞ թէ և զուք օտար չըջեք ինձի պէս:
Ո՛հ, քաղցր է ինձ, քաղցր Հայրենիքս իմ սրտին,
Ոյր յիշատակ կրեմ յոգիս անմոռաց,
Յօտար այս տեղ երբ յուշ անեմ Հայաստան,
Աղի արցունք զուրս կցայտեն յիմ աչաց: